

քարի նիւթ եղած ճարտարապետական ոճին, որը կարելի է կոչել Հայկական լատի (կարգ) (Ordre Arménien):

*
* *

Հարեանցի ասենք որ արևմուտքում արդէն շատ ուսումնասիրուած է եկեղեցական ճարտարապետութեան սկզբնական յղացումն, գործադրութիւնն և զարգացումն: Ուսումնասիրողները ոմանք առնուած են նախատիպար յունական տունը, ուրիշներ հռոմէականը: Առանց դատաւոր կանգնելու երկու կարծիքների միջև մեզ թոյլ, դիտելով թէ առանձնականի մի տուն լինելու է նախատիպար յետագայ եկեղեցիների, առաւելութիւնն տալու է յունականին, որի բաժանումներն յարմարագոյն են հին եկեղեցու խորհրդական ծէսէրին և հաւատացելոց զանազան դասակարգութիւններին: մինչ հռոմէականն նախ՝ որ պարզ է և երկրորդ հիմն զարծեալ յունականն է, զի հռոմէացիք, հետեւել են յայններին, ինչ որ երևում է Պոմպէյի աւերակներից, որ պատկանում էր Միծն Յունաստանին, որի բնակչութիւնն յոյներ էին:

Մենք մի անգամ 1914 թ. Հոռոմու ներկայ գտնուեցինք Պրոֆ. Կանցլէրի դասախօսութեան, Եկեղեցական երգի բարձրագոյն Դպրոցի մէջ, նա ճշմունք էր բացատրել և ապացուցանել թէ հռոմէական տունն միտք տուած է միջնադարեան բազիլիկաների կառուցման: Յայտնի է համարիչ չէին փաստերը և նմանութիւնները, մինչև մեղքնալու եկաւ նեղը մտած սուտը: չապտտին, ու մտքէս ասի, Տէ՛ հէր օրհնած, մէկ գնա Հայաստան և կու տեսնես քո երգչաւած տաճարի գաղափարն հայ տների և ախոռների մէջ. ուր փոխանակ մարդիկ խառն ի խուռն լեցուելու, ամէն մի փակի մէջ միմի անասուն որոնում են. իսկ դպրաց դասն Schola cantorum, ախոռի օտան է գոմի ճակատն շինուած, ուր բուխերիկի մէջ անշէջ վառում է Որմզդաւ կան կրակն:

Հուսկ երբ կարդացինք Պրոֆ. Լիսիցեանի բանախօսութիւններն յիշաւ զուարճացաւ սիրտս և յիշեցի անցեալն, երբ մտքիցս չէր անցնի թէ մի օր Հայկական ինքնուրոյն ճարտարապետութեան հարցն պիտի բարձրանայ գիտնականների միջև, և հարկ պիտի լինի դիմել հայ գիւղացու տանը և ախոռին մեր ազգային դատը պաշտպանելու համար: Որով ուրախ պիտի լինինք ընթեռնելու, նոյն ուղղութեամբ նոյն յարգելի Պրոֆ-ի կամ այլոց նոր ուսումնասիրութիւններ, մինչև որ յաջողի երկնքի պայծառ աստղաճամուկ կապոյտ կամարի տակ հետազոտութիւնները հաստատեն հայ մտքի ծնունդ մեր հրաշապայծառ, յոսատ, զարդ և անեման կաթողիկէն Հայոց:

Հ. Գ. Ն.

Ս.Մ. ԵՆ

Ամեն, երբայեցեդէն, յունարէն և արաբերէն ամի՛ն երբ բառերու վերջը դրուած է՝ կը նշանակէ. Այո՛, այդպէս է, և այդպէս ըլլայ. իսկ երբ սկիզբը դրո՛ւր կը նշանակէ Մտոյգ, ստուգութեամբ, հաստատութեամբ, յիշաւի, ճշմարիտ, այս այսպէս է, և այսպէս ըլլայ: Ամեն կը նշանակէ՝ անսխալ ճշմարտութիւնն՝ Աստուած, Ասոր օրինակ Յայտնութեան մէջ կ'ընթեռնուք. « Այսպէս ասէ Ամէն » վկայն հաւատարիմ և ճշմարիտ »: Իստ Լուզուիկ Ժինսպէրկի (Louis Ginsberg) հին եբրայական բառիս պէս չկայ ընդհանրացած այլ բառ, որ գործածուի քրիստոնէիցմէ, մահմետականներէ և հրէաներէ: Հին՝ և նոր՝ կտակարանի մէջ շատ տեղեր կը գործածուի բառս վերոյիշեալ իմաստն:

1. Երեմ. ԺԱ, 5. Էբ. 6. — Ա. Բզ. Ա. 36. — Թե. Ե. 22. — Բ Օր. Էբ 15-26. — Ա. Մ. ԺՁ. 36. և այլն:

2. «Ամեն ասեմ» Աւետարանաց մէջ յիսուսէն աւելի ըսուած է: Հոռոմ Ա. 25. Փիլ. Դ. 20. Ա. Տիմ. 2. 21. — և այլն:

րով, զորս աւելորդ կը համարիմ հոս մի առ մի յիշատակել, Հին Պատարագամատոյցնէր կը գործածեն Ամեն բառը 1. Սրբագործութենէն վերջ, 2. Հաղորդութենէն վերջ և 3. Փառաքանութիւններէ վերջ:

Սրբագործութենէն վերջ՝ ամենին գործածութիւնը կը գտնենք Եւսեբ.ի Եկեղեցական պատմութեան մէջ (Դպր. Է. գլ. Ե.). Դիոնիսիոս Աղեքսանդրիոյ հայրապետը կը գրէր Քիսեստոս քահանայապետին հերետիկոսաց անօրէն մկրտութեան մը վրայ, և մկրտեալը « գոհութեան աղօթից » և լսող լեալ էր ստէպ և ընդ եկեղեցւոյն « ՎՄԷՆՆ պատասխանեալ, որ սրբոյ սե. « զանոյն յանդիման կացեալ և զձեռս իւր « ընդդէմ աուրք կերակրոյն սփռեալ յըն. « դունակութիւն և ի ճաշակ, և մարմնոյ « և արեան հաղորդ գտեալ ընդ երկար « ժամանակս »... Կ'երևի այս վկայութենէն՝ որ Հին առնն եկեղեցիք սրբագործութեան բառերը բարձր ձայնով կ'ըսէին և ժողովուրդն ալ կ'աղագակէր՝ Ամեն, ինչպէս է մեր պատարագամատոյցից խորագիրներուն հաստատմամբ: Զայս արևմտեանց համար կը հաստատէ Պէնա (Rer. liturg. L. II. C. XIII, N. 1) և Մապյլիոն (Comment. in ord Rom. p. XLIX): Աղեքսանդրիոյ կոպտը Սրբագործութենէ վերջ ունին ամէնս, ինչպէս կան Կ. Պոլսի, Աղեքսանդրիոյ, Անտիոքայ, Ս. Մարկոսի, Յակոբայ, Բարսղի, Ոսկերիքաւնի պատարագամատոյցներուն մէջ: Քապրոլ (F. Cabrol) կ'ըսէ թէ պատարագը ժողովրդեան համար էր, երբ եկեղեցիէն դուրս կը հանուին, որոնց ներկայութիւնը արգիլեալ էր, ի հարկէ այլ ևս զաղտնիք չի կար, պատարագիչն և ներկայց հաղորդակիցք են մէկ մէկու, պատարագիչն է, որ հաւատացեալները կը յորդորէ որ ուշադիր ըլլան փառաբանութեան, և պէտք է որ ինքը լսելի ձայնով աղօթքները և օրհնութիւնքը կատարէր, որպէս զի ժողովուրդն ալ պատասխանէր արտայայտիչ ամեն բառով իւր հաւանութիւնն: Յայտնի է այս որ երբորդ

զարուն վերոյիշեալ վկայութեամբ 257—8 թուականիս կիրառութիւնն բարձր ձայնով էր: Եւ պէտք էր, որ հռովմէականին մէջն ալ բարձր ձայնով ըլլար սրբագործութեան խօսքերը, կ'ըսէ Քապրոլ, և ոչ ցած ձայնով, վասն զի երբ ամենն ժողովուրդը պիտի արտասանէր, պէտք էր որ զայն լսէր, մինչդեռ այժմեան այլափոխութիւնն սակաւ տրամաբանական և հինն նախնական պատարագն էր շատ աւելի կանոնաւոր:

Հաղորդութենէն վերջ Ամենը կը յիշէ Եւսեբիոս (Դպ. Զ. գլ ԽԳ. էջ 512), պատմելով Նովատիոս հերձուածողին արարքը, որ փոխանակ հաղորդէն վերջ ամենն ըսելու՝ կը ստիպէր որ ըսնն թէ պիտի չդառնամ առ կոռնելիոս. « Եւ մարդն այն « տառապեալ ոչ ճաշակէր, մինչև ոչ « նզովէր զանձն իւր և յառնուէն զհացն « փոխանակ ամէն տախիւ, Ո՛չ ևս դար. « ձայց, ասէր, առ կոռնելիոս »: Հաղորդութենէ վերջ ամէն ըսելու սովորոյթը կը յիշէ Տիմոտէիանոս, Ս. Օգոստինոս և այլ բազումք:

Փառաքանութիւններէն, ինչպէս ամէն արարողութիւններէն վերջ, կնիք էր ամենայն եկեղեցեաց մէջ ամենը: Յոյնք՝ Հայր մերին վերջը կը յաւելուն զայն, բայց անկէ նախընթաց կը դնեն « Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք »-ը, որ Աւետարանին մասն կազմեր է յետոյ հին ժամանակով:

Կը գտնենք ամենի գործածութիւնը ոչ միայն բոլոր քրիստոնէից պատարագամատոյցներուն մէջ, այլ արձանագրութեանց, դամբաններու, պապիքոսներու և ընդհանրապէս ճառերու, ներբողներու վերջը, զորս արտասաններ են սուրբ հայրապետք եկեղեցեաց:

Մեր ազգին մէջ շատ ընդհանրացած է բառիս կիրառութիւնը, կարելի է ըսել ամէն աղօթք ասով կը վերջանայ: Խորհրդաւոր սովորոյթներ են գաւառներու մէջ՝ երբ նոր տուն մը կ'աւարտէր, զըլխաւոր ճարտարագործը պսակը կը կանգնէր տանը բարձրութեան վրայ և կա-

նանչներով ու ծաղիկներով կը զարդարէր
 և Աբրահամու օրհնութիւնը բարձրէն ա-
 զաղակելէն զկնի, երբ տանուտէն և ազ-
 րականք նուէրներ կը բերէին աշխատա-
 ւորաց՝ ամէնցը միահամուռ կ'աղաղակէին
 Ամեն ինչոյց մ'է, որ կը սարքուի նոր
 ամուսնացելոց օրհնութենէն վերջ. տանե-
 լէցն է, որ սեղանին վրայ հին աւանդու-
 թեամբ կը սկսի Տովբիթայ սրտաշարժ
 պատմութիւնը և կը մաղթէ զաւակին հայ-
 րական օրհնութիւնը, ներկայը միարեան
 կ'աղաղակեն Ամեն Այս և ասոնց նման
 շատ արարողութիւններ ու մեր հնաւանդ
 սովորոյթը դեռ ևս արեւելքի մէջ գոյու-
 թիւն ունին, ուր մանաւանդ գաղթակա-
 նութիւնը են Հայաստանի բնաշխարհէն
 ժողովուած: Եթէ կը գտնենք արեւմտեայց
 մէջ այս հին արձանագրութիւնները գե-
 րեզմանադարերու վրայ. *Hic requiescit..*
in pace amen կամ *Qui requiescat*
in pace amen. (Աստ հանգչի ի խաղա-
 ղութեան ամէն), որչափներ կային մեր
 սրբատաշ խաչքարերու ներքեւ այսպիսի
 վերտառութիւններով, որոնք ամենով կը
 վերջանային. և այժմ ատոնք չարագործ
 ձեռքեր խորտակել են և չկան, բայց
 ֆիասցեր են անաղարտելի հոգեշունչ այս
 զգացումները հայ քրիստոնէից սրտերու և
 հոգիներու մէջ, երբ իրենց սիրելիներու
 յուղարկւումը խորը հանդիսէն
 վերջը, քահանայն կը կանգնի գերեզմա-
 նոցին մի կողմը, կը մերձենան մերձաւորը
 համբուրելու սուրբ աւետարանը և սուրբ
 խաչը, քահանայն զգայուն սրտի խորե-
 լէն կը հնչեցնէ սփոփիչ խօսքեր. Սուրբ
 Հոգին զձեզ մխիթարէ. և ահա ամէն բե-
 րանէ լիագեղ բառ մը կը թուի՝ ամենք.
 բառ մը վսեմ, բարձր, երկնային, որ կը
 սրտապնդէ սգաւորները և անոնց հոգւոյն
 վրայ այնպիսի ազդեցութիւն մը կ'ընէ՝
 որուն նման այնքան լաւ բացայայտիչ
 բառ չկայ լեզուի մը մէջ:

Ո. Կ.

Գ Ր Ա Կ Ա Ն

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՊԻՆԻ

ԱՂՕԹՔ ԱՌ ԿՈՅՈՆ

Կոյս, որ եղար մեզ համար միշտ բարեխօս
 Առ Այն որ քու կաթէդ ու քու արիւնդդ
 Ուզեց շինել իրեն զգեստներ մարմնեղէն,

Արդ որ ազգերը գինովցած խնթեցած
 Սեւ գինովով որ կը հօտի վէրքերէն,
 Հօտեր եղած են առանց մէկ օրէնքի,

Եւ այժմարդ դարձած հնոսի կուռքերէ
 Կը կոխտեն Աւետարանն առաթուր,
 Ու Քու Որդւոյդ դէմ մարտի դաշտ են ելած,

Կարմիր լընին վըրայ դարձուր աշուններդ
 Եւ յանուն քաղցր անդամներուն կապուցած՝
 Զօրքս պագիր գիշերային արցունքով,

Քու արգանդէդ ելած այն սուրբ՝ կատարեալ
 Անդամներուն, որոնք խաչին փայտին վրայ
 Հաստանեղոյս բեւեռապիղդ զամուսնացան.

Յանուն արեան Անոր՝ յաւերժ գրաւական
 Յաւերժ սիրոյ, Եւ յանուն այն ապականին
 Բերանին վրայ որ կ'աւետէր երկնքի

Ազգայութիւնն, ընդունէ՛ Ղու յուսահատ
 Աղօթքն որ պինտ պահողորդ Քու ստղուկներուդ
 Յոգնատրիւտը երկրէն Քեզի կ'ուղերձէ:

Վերապրողաց վըրայ, Ե՛ւ, թող չըննէ՛
 Վատախտաբակ զազանութիւնն ազգերուն.
 Թող աղօթքովդ Յիսուս քերէ ու լըայ

Սրտերը մեր, զի վարակած են զանոնք
 Խղիայթուածներն ամենափոտ զարշութեամբ,
 Յետ կամակոր ու դժպէհի ուրացմանց

Պատուիրանաց Կտակարանացդ կրկին.
 Սրբազնաստուրք օրէնքը Զոյգ Լեւնեբուն
 Յնցուած շարդուած՝ դըրդուամէն մարտերու

Զոր կ'արտասուէ աշխարհը՝ շատ ուշ սակայն,
 Քուրջի կըստը մըն է բերանն անբանին
 Մինչեւ աղիքն ախտերու մէջ թաթխուած: